ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«14» 11 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 101

Ձեռնարկողը՝ ***<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ***
ՀՀ Կոտայքի մարզ, Պռոշյան ավան

Գործունեությունը՝ ***Գետամեջ համայնքի /բնակավայրի/ պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ՀՀ Կոտայքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 101

«14» 11 2017թ.

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ <<Մեծ Մասրենի>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրութային փաստաթուղթ

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Մեծ Մասրենի» ՍՊԸ-ի կողմից՝ ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի պատվերով (Պայմանագիր N ՀՀ ԿՄԳՀ-ՊԸԱՇՁԲ -17/ 1):

Գետամեջ համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավ-արևելյան հատվածում, Եղվարդի տարածաշրջանում: Սահմանակից է Նոր Հաճն, Աբովյան քաղաքներին, և Արզնի, Պտղնի, Քանաքեռավան և Նոր Գեղի համայնքների վարչական տարածքներին: Համայնքի տարածքով անցնում է Հրազդան գետը:

Գետամեջ համայնքը գտնվում է նախալեռնային գոտում, ծովի մակերևույթից 1250մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 15կմ է, մարզկենտրոնից՝ 35կմ:

Գետամեջ համայնքում ներկայումս բնակվում է 845 մարդ, հեռանկարում այդ ցուցանիշը կհասնի 930 մարդու:

Շրջանի կլիման չոր և խիստ ցամաքային է (ամռանը մինչև +38°C, իսկ ձմռանը -29°C): Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 516մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 15սմ, իսկ հողի սառցակալման առավելագույն խորությունը 61սմ է:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 560.39հա: Համայնքի հողերից 275.53հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կդառնա 248.39հա: Բնակավայրերի հողերը կազմում են 214.08հա, հեռանկարում՝ 215.09հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 43.10հա, հեռանկարում՝ 43.10հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 10.75հա, հեռանկարում՝ 36.28 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 4.06հա, հեռանկարում՝ 4.66հա, ջրային հողեր՝ 12.87հա հեռանկարում՝ 12.87հա:

Գետամեջ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և հողագործությամբ:

Գետամեջ համայնքը հիմնականում կառուցապատված է 800-2000քմ մակերեսով, 1-2 հարկանի քարե պատերով: Կառուցապատման գիծը հիմնականում պահպանված է և սահմանված է փողոցների կարմիր գծից մոտ 3մ հեռավորությամբ: Գյուղի կենտրոնը ձևավորված է Հրազդան գետի աջակողմյան հատվածի տարածքում, որտեղ գտնվում են գյուղապետարանի և դպրոցի շենքերը: Գյուղապետարանի շենքում է գտնվում նաև բուժ.կետը, գրադարանը, կապի բաժանմունքը: Հարակից տարածքում է գտնվում գյուղի միակ առևտրի սպասարկման օբյեկտը:

Բնակավայրի տարածքը բաժանված է Հրազդան գետի աջակողմյան և ձախակողմյան հատվածներով: Փողոցային ցանցը ներկայացված է գլխավորապես 8մ լայնությամբ կանոնավոր փողոցային ցանցով:

Բնակավայրի հարավային մասում առկա պահուստային հատվածում, գոյություն ունեցող կառուցապատված տարածքներին անմիջականորեն կից նախատեսվում է կազմակերպել որպես բնակելի գոտու շարունակություն: Նոր հողամասերը, հաշվի առնելով տարածքային հնարավորությունները սահմանվել են 800-1000քմ:

Գետամեջ գյուղի ջրամատակարարման համակարգը ներկայումս սնվում է բնակավայրի տարածքով անցնող Արզական-Երևան, Արզնի-Երևան՝ Արզնի 1 և Արզնի 2 ջրատարներից: Ջրամատակարարման բաշխիչ ցանցը սպասարկվում է, <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից: Բնակավայրում բացակայում են ՕԿՋ-ները, բաշխիչ ցանցը միացված են գործող ջրատարներին: Ջրի ախտահանումն իրականացվում է ջրատարների գլխամասերում գործող քլորակայանների միջոցով:

Պահանջները բավարարելու համար հեռանկարում նախատեսվում է նոր ՕԿՋ կառուցում, որը պետք է ունենա 400մ^3 տարողություն:Նոր թաղամասի համար նախատեսվում է նաև նոր ցանցերի կառուցում՝ ընդգրկելով խորքային հորերի ջրամատակարարումները:

Ջրապաշտպան գործունեության կառավարման արդյունավետության բարձրացման և ջրային օբյեկտների վիճակի օբյեկտիվ գնահատման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

-Ջրամատակարարման ցանցի վերակառուցում

-Հոսակորուստների վերացում

-Ջրամատակարարման համակարգի կենտրոնացում մեկ ջրատարով՝ կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջների իրականացման համար:

Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 186լ/օր:

Գետամեջ համայնքը չունի կոյուղու համակարգ: Կոյուղացումն իրականացվում է բակային ներծծման հորերով: Կենցաղային կոյուղաջրերը հեռանկարում նախատեսվում է հեռացնել բնակավայրի հարավ-արևմտյան հատվածում նախատեսվող մաքրման կայան, որտեղ մաքրվելուց հետո մաքրված հոսքաջրերը կհեռացվեն հարակից Հրազդան գետ:

Կոյուղու համակարգը բարելավելու և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ պատշաճ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները՝

-կոյուղու ցանցերի կառուցում.

-կենցաղային կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցում.

-սելավային ջրերի բակային և փողոցային ցանցի կառուցում.

Ներկայումս Գետամեջ համայնքը հեղեղատար կոյուղի չունի: Ձյան հալոցքից, անձրևաջրերը անկանոն ձևով առանց մաքրման հեռացվում են դեպի գյուղի միջնամասով անցնող Հրազդան գետ: Նախագծով նախատեսվում է հեղեղատար ջրերը մինչև սելաֆատար լցվելը անցնեն մեխանիկական մաքրում: Հեղեղային կոյուղին պետք է ընդգրկի գյուղական

համայնքի ամբողջ տարածքը և համայնքը շրջապատող ամբողջ ջրահավաք ավազանը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի.

-ներթաղամասային ցանցերը 5.9կմ

-փողոցային ցանցերը 16.3կմ

-ընդամենը 22.2կմ

Հեղեղատար ցանցերը կախված թաղամասերի նշանակությունից կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե կիսախողովակներ:

Գետամեջ համայնքի բնակչությունը տնամերձ հողամասերի ոռոգման համար ջուր է վերցնում Հրազդան գետից:

Գետամեջ համայնքի էներգամատակարարումը իրականացնում է <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ <<Գեղամա>> մասնաճյուղը: Համայնքի գլխավոր սնուցող ենթակայանը 3200կվա հզորությամբ 3500կվ լարման 35/10 համայնքի ենթակայանն է: Բնակավայրի տարածքում գործում են 10/04կվ լարման 2 /մեկտրանսֆորմատորային/ ենթակայան, որոնց գումարային հզորությունը կազմում է 650Կվա: Էլեկտրահաղորդման օդային գծերի երկարությունը 13.8կմ է: Էլեկտրաէներգիայի տարեկան գումարային ծախսը կազմում է 1066.3հազ. կվտ/ժ:

Գետամեջ համայնքը ներկայումս գազաֆիկացված է: Համայնքի գազամատակարարման համակարգը երկաստիճան է: Համայնքը միջին ճնշման գազ է ստանում Արզնի համայնքից եկող Փ100մմ մ/ճ գազատարից :

Անհատական բնակելի տների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով:

Վարչական և այլ շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է իրականացվել կենտրոնացված եղանակով՝ կցակառույց /ինչպես նաև գոյություն ունեցող/ կաթսայատներից:

Ներկայումս համայնքի անհատական տներում ջերմամատակարարումը իրականացվում է, բնական գազով կամ փայտի վառարաններով: Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված տները հեռանկարում կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում: Դպրոցի, մանկապարտեզի և վարչական շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել կենտրոնական եղանակով նոր կառուցվող կամ գոյություն ունեցող ոչ մեծ հզորությամբ կաթսայատներից :

Գետամեջ համայնքն ունի մեկ գերեզմանատուն, որը փակ է և գտնվում է բնակավայրի տարածքում: Ընդհանուր մակերեսը կազմում է 2.06հա: Համայնքի ավագանու անդամների առաջարկությամբ, համայնքի հյուսիս-արևելյան հատվածում, գյուղ նշանակության հողերից, 22.66հա տարածք նախատեսվում է տրամադրել նոր գերեզմանոցի համար, որի դիրքը ընտրվել է քաղաքաշինական նորմատիվներին համաձայն, պահպանելով սանիտարապաշտպանիչ գոտին՝ 300մ բնակելի կառուցապատված հատվածի նկատմամբ: Այդ տարածքում կատարվել է երկրաբանական և հողագիտական հետազոտություններ: Առաջարկվում է հին գերեզմանոցը պարսպապատել և տարածքում իրականացնել դեկորատիվ ծառերով կանաչապատում:

Գետամեջ համայնքը աղբավայր չունի, ինչի պատճառով աղբը հիմնականում տեղափոխվում է այլ համայնքի աղբավայր: Համայնքի բնակելի թաղամասերում առաջարկվում է տեղադրել աղբարկղեր:

Ներկայումս՝ իրականացման փուլում է Կոտայքի մարզի աղբահանության կառավարման ծրագիրը, որի շրջանակներում Հրազդանում կկառուցվի նոր ժամանակակից աղբավայր:

Ծրագիրը նախատեսում է բնակավայրերում կազմակերպել փոքր տարողությամբ աղբահավաք վայրեր, որտեղից պարբերաբար աղբը կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր:

Ներկա դրությամբ Գետամեջ համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ /զբոսայգիներ, պուրակներ և այլն/ գոյություն չունեն: Նախագծով նախատեսվում է բնակավայրի հյուսիսային և հարավային հատվածներում կանաչ գոտիների ստեղծում:

Համայնքի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման ժամանակահատվածում օգտագործվող վառարանները: Ներկա դրությամբ, տարածքի օդային ավազանի աղտոտվածության աստիճանը գնահատվում է բարենպաստ, որևէ վտանգ չի առաջացնում շրջակա միջավայրին:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչեցված առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից նախագիծը հավանության է արժանացել: Հատակագծում լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատակագծում նախատեսված միջոցառումների արդյունքում Գետամեջ համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան